ՆՎԱՐԴ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԵՂՈՅԱՆ

Երաժշտագետ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի դասախոս
E-mail: nvardegoyan@gmail.com

ԵՊԿ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ. ՄԱՐԳԱՐԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(ՆՎԻՐՎՈՒՄ Է 100-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ)

2021 թ. հունվարի 8-ին լրացավ երաժշտագետ, մանկավարժ, ՀԽՍՀ Արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Մարգարիտ Հարությունյանի 100-ամյակը: Սույն հոդվածը խոնարհում է նրա լուսավոր հիշատակի առջև, որի նպատակն է արժևորել մեր Մայր հաստատության՝ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիային հասակակից, վաստակաշատ արվեստագետի անցած ճանապարհը և թողած ժառանգությունը:

Մարգարիտ Հարությունյանի գիտական, կրթական, հասարակական գործունեության վաստակը մեծ է հայ երաժշտագիտական դպրոցի ամբողջ պատմության համատեքստում և օրգանապես ներհյուսվում է նրա պատմական զարգացման տրամաբանությանը:

Լայն մտահորիզոնի և բազմակողմանի զարգացած մտավորականի անցած ուղին սկսվել էր ինքնատիպ միջավայրում, որի դերակատարումը հասկանալու համար մեջբերենք Մարգարիտ Հարությունյանի և երաժշտագետ Զարուհի Տեր-Ղազարյանի համատեղ հեղինակած «Ճանապարհ դեպ Պառնաս» գրքից մի հատված. «Հայտնի ճշմարտություն է, որ երեխան որպես մարդ-անձնավորություն ձևավորվում է վաղ մանկության հասակում: Թե ինչպիսին կդառնա նա, ինչ պաշարով կմտնի կյանք, ինչ հետաքրքրություններ և նախասիրություններ կունենա, ինչին կձգտի՝ հիմնականում որոշվում է նրա կյանքի առաջին տասնամյակում, որը մշտապես մնում է նրա հիշողության մեջ, նրա հոգու ամենանվիրական անկյուններում» (8. էջ 4)*: Մարգարիտ Հարությունյանի համար այդպիսի նվիրական անկյուններ եղան մի կողմից Հայաստանի Լուսավորության նախարարությանը կից նորաստեղծ փորձարարական-ցուցադրական Կրուպսկայայի անվան դպրոցը (1991 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ կրթության նախարարության կոլեգիայի որոշման համաձայն վերանվանվել է Նիկոլ Աղբալյանի անունով), մյուս կողմից՝ կոնսերվատորիան: Երկու հասակակից հաստատություններ, որոնց 100-ամյակը նշվում է այսօր: Սակայն անձի ձևավորման համար առաջնային կարևորություն և դերակատարում ունի ընտանիքը:*

Մարգարիտը Հարությունյանների ընտանիքի միակ զավակն էր: Հայրը՝ մանկաբարձ գինեկոլոգ, գիտական, բժշկական գիտությունների դոկտոր Գաբրիել Հարությունյանն էր, իսկ մայրը Երևանի բժշկական ինստիտուտի քիմիայի ամբիոնի վարիչ, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Աշխեն Հարությունյանը: ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ Վիգեն Իսահակյանը «Հայրս» գրքում Հարությունյանների ընտանիքին բնութագրում է, որպես պատվական, եվրոպական մտածողությանը հարող, հայ մշակույթի երևելիներին մեկտեղող և համախմբող պայծառ մտավորականների ընտանիք (3. էջ 306): Հայ հասարակության մտավոր սերուցքով շրջապատված փոքրիկ աղջնակը՝ Մարգարիտը, մեծանում և ձևավորվում էր որպես շրջապատի մարդկանց արժևորող, գնահատող ապագա արվեստագետ (24.): Եղիշե Չարենցի, Հրաչյա Աճառյանի, Ավետիք Իսահակյանի, Ռոմանոս Մելիքյանի, Փանոս Թերլեմեզյանի, Մարգիս Բարխուդարյանի, Արամ Խաչատրյանի և հայ ազգի այլ կարկառուն դեմքերի հետ շփման մեջ հասունացող պարմանուհին զուգահեռաբար դառնում է նորաստեղծ երաժշտական հաստատության անդամ: Դա կոնսերվատորիային կից գործող շնորհալի երեխաների խումբն, էր, որտեղ սովորում էին նաև հայ կոմպոզիտորական միջին սերնդի համբավավոր, անվանի դեմքեր Ալեքսանդր Հարությունյանը, Առնո Բաբաջանյանը, Էդվարդ Միրզոյանը, Ղազարոս Սարյանը և այլոք:

1937 թ. սկիզբ առած ծանոթությունը Արամ Խաչատրյանի հետ կարևոր դերակատարում ունեցավ նրա մասնագիտական ուղղվածության ընտրության հարցում: 1938 թվին 17-ամյա Մարգարիտը, լիցքավորված գիտելիքներով, ընդունվում է Երևանի կոնսերվատորիայի պատմատեսական ֆակուլտետ և գերազանց առաջադիմությամբ փայլուն ավարտում այն 1944 թվին:

Ուշագրավ է նրա դասախոս, նշանավոր երաժշտագետ, մանկավարժ, երաժշտահասարակական գործիչ Զավեն Վարդանյանի կողմից շրջանավարտին տրված բնութագիրը, որտեղ նշվում է. «շատ ընդունակ երիտասարդ երաժշտագետի ակտիվ մասնակցությունը հանրապետության երաժշտական կյանքի բոլոր միջոցառումներին» (14.):

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Ծովինար Հրայրի Մովսիսյանի՝
7.5.2022 թ., ընդունվել է տպագրության՝ 6.5.2022 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 1.5.2022 թ.

Լինելով բազմակողմանի զարգացած անհատականություն, կոնսերվատորիան ավարտելուց հետո Հարությունյանն ընդունվում է նույն տեղում աշխատանքի և 1962-ից մինչև 1995 թ. ղեկավարում երաժշտության պատմության ամբիոնը:

Պետական երաժշտական հրատարակչությունը նախաձեռնում է թողարկել "Музыкальная культура союзных республик" («Միութենական հանրապետությունների երաժշտական մշակույթը») գրքաշարը: Հայաստանը ներկայացնելու պատասխանատու գործը վստահվում է երիտասարդ երաժշտագետին, և 1957 թ. այդ համատեքստում լույս է տեսնում Մ. Գ. Հարությունյանի "Армянская ССР" գրքույկը (19.), որը չնայած իր փոքր չափերին ներառում է մեծ ժամանակահատված՝ մոտ երկու հազարամյա պատմական

Երաժշտագիտական երաժշտապատմատեսական բաժնի պրոֆեսորները Մ. Ա. Բրուտյան, Մ. Վ. Կոպտև, պրոռեկտոր Մելիք-Վրթանեսյանի հետ, Ռ. Ա. Աթայան, Գ. Ե. Բուդաղյան, Գ. Գ. Տիգրանով, Մ. Ա. Տերյան, Ն. Վ. Դերոյան, Թ. Մ. Արազյան, Մ. Ա. Տոնյան, Է. Ռ. Փաշինյան, Ա. Ա. Բարսամյան, Գ. Մ. Չերոտարյան, Մ. Բ. Ամատունի, Մ. Գ. Հարությունյան, ԵՊԿ 1967թ.

Ողջ կյանքի ընթացքում երաժշտագետի դասախոսական աշխատանքը զուգակցված է եղել գիտական գործունեության հետ: Հարությունյանի հետաքրքրությունների շրջանակն ընդգրկուն է, սկսած հայ երաժշտության պատմության ակունքներից մինչև պրոֆեսիոնալ կոմպոզիտորական դպրոցի ձևավորման, կայացման և զարգացման շրջան՝ թերևս այդ տարիներին դեռ քիչ դիտարկված ոլորտ, որը դարձավ նրա լուրջ ուսումնասիրության առարկան: Ապագայում երաժշտագետն իր դիտակետի տակ ներառեց առավել մեծ ժամանակահատված՝ մինչավատատիրական շրջանից մինչև XX դարի վերջ:

Վերը նշված թեմայի շուրջ կատարած ուսումնասիրական-հետազոտական առաջին քայլը եղավ 1954 թ. Մոսկվայում փայլուն պաշտպանած "Пути становления армянской национальной композиторской школы" ատենախոսական թեզը, որից և սկսվեց երաժշտագետի ակտիվ գիտական գործունեությունը: Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության 40 ամյակի առթիվ, ընթացքը մինչև հրատարակման տարին: Այբբենական կարգով հայ կոմպոզիտորների մասին ներկայացվող համառոտ տեղեկությունները, լուսանկարները և նոտային օրինակները լրացնում են շարադրանքն ու ամբողջացնում համապատկերը: Հարությունյանի մոտ դեռևս ասպիրանտական տարիներին ցանկություն է եղել գրել ատենախոսություն Արամ Խաչատրյանի գործունեության մասին, որը սակայն, երիտասարդ երաժշտագետի հեղինակությանը «չվնասելու» մտավախությունից ելնելով՝ Արամ Իլյիչի հորդորին ականջալուր, չի իրականացվել: Այդ մասին տեղեկանում ենք նրա անձնական արխիվում պահվող Արամ Խաչատրյանի մասին անտիպ գրառումներից (14.): Գաղափարը մասամբ իրագործվեց 1962 թ., երբ լույս տեսան «Արամ Խաչատրյան» (11.) և 1981 թ.՝ դպրոցական բարձր տարիքի համար «Նշանավոր մարդկանց մասին» մատենաշարում հրատարակված համանուն գրքերը (12.):

1964 թ., Ն. Թեյմուրազյանի և Զ. Սեմյոնովայի հետ համատեղ կազմվեց Տիգրան Չուխաճյանի մատենագիտությունը (17.): Այս տարիներին Հարությունյանը մեծ աշխատանք կատարեց նաև որպես խմբագիր, որը գրքի ստեղծման խնդրում ունի հեղինակից ոչ պակաս դերակատարում: 1968-ին լույս տեսավ Զ.Սեմյոնովայի "Василий Давыдович Корганов. Статьи, воспоминания, путевые заметки, биобиблиография" (22.) հսկայածավալ աշխատությունը, իսկ մեկ տարի անց Ս. Գասպարյանի «Կոմիտաս» գրքույկը (նվիրված մեծ կոմպոզիտորի ծննդյան 100-ամյակին) (2.)՝ երկուսն էլ Հարությունյանի խմբագրությամբ: Նա որպես խմբագիր համագործակցեց նաև Գ. Գ. Տիգրանովի (22.), Մ. Պետրոսյանի (15.), Լ. Գրիգորյանի (19.) և այլոց հետ:

1974 թ. Ն. Թեյմուրազյանը, Զ. Սեմյոնովան, Մ. Հ. Բաբայանը և Մ. Գ. Հարությունյանը կազմեցին «Հայ ականավոր երգիչներ» մատենագիտական ցանկը (5.) և հետագայում հայ ականավոր երգչուհի Հայկանուշ Դանիելյանին նա նվիրեց մի ամբողջ աշխատություն, որը լույս տեսավ ռուսերեն՝ 1988 թվին (17.): Թեև Հարությունյանի համար բնութագրական է որպես խմբագիր տարբեր հեղինակների հետ աշխատելը, սակայն միևնույն է, դրանցում վառ արտահայտվում է իր անհատական, ուրույն ձեռագիրը, որի համար հատկանշական է տրամաբանված մտածողության պատմականությունը, հստակ և ճշգրիտ բնութագրերի, տիպական գնահատականների առկայությունը, հասկանալի և առանց երկարաբանության, տրամաբանված շարադրանքը: Թվարկված գրավիչ և արժեքավոր հատկանիշները համակցվում են ևս մեկ գնահատելի առանձնահատկությամբ: Դա երևույթներին և անհատներին տրված բնութագրերում, վերլուծություններում և գնահատականներում առաջնային այն համաշխարհային երաժշտական արվեստի համապատկերի, մտածողության մեջ տեսնելն է և դրանց օրինաչափությունների զուգահեռականությամբ ու պատմական ընթացքով քննելն է: Նրա ուշադրությունից չի վրիպում ոչ մի մանրուք, որը կարող է կարևոր դերակատարում ունենալ տվյալ երևույթի առավել ամբողջական ընկալման համար: Գրավիչ ու անթերի շարադրանքը, պատկերավոր խոսքը երաժշտագետի աշխատությունների արժեքավոր կողմերն են: Այն վառ արտահայտվում էր նաև դասախոսությունների ժամանակ՝ բանավոր խոսքում, որի կախարդիչ ուժն ուսանողների մի քանի սերնդի տարել է արևմտաեվրոպական և հայ դասական երաժշտության գունեղ ու բազմաշերտ աշխարհ՝ անցյալը դարձնելով անչափ մոտ և տեսանելի:

60-ականներին անհրաժեշտ էր գրել «Հայ երաժշտության պատմության» դասագիրք, քանի որ մանկավարժական գործունեությունը թելադրում էր իր պահանջները: Ճիշտ է, 1958 թ. արդեն լույս էր տեսել Ք. Քուշնարյանի «Հայ մոնոդիկ երաժշտության տեսության և պատմության հարցեր» հիմնարար և Ա. Շահվերդյանի «Ակնարկներ Հայ երաժշտության XIX - XX դդ.» աշխատությունները: 1963-ին հրատարակվեց նաև Ք. Քուշնարյանի, Մ. Մուրադյանի, Գ. Գյոդակյանի հեղինակած «Ակնարկներ հայ երաժշտության պատմության» ուսումնասիրությունը, որը տվյալ թեմայի շրջանակներում առաջին ընդհանրացնող աշխատություններից էր: Սակայն նշված ուսումնասիրությունները չէին կարող միանշանակ ձևով ծառայել որպես «Հայ երաժշտության պատմություն» դասընթացի դասագիրք: Որպես այդպիսին առաջինը եղավ երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու Աննա Ալեքսանդրի Բարսամյանի հետ համատեղ գրված, 1968 թվին լույս տեսած «Հայ երաժշտության պատմություն» ուսումնական ձեռնարկը: Իր անբաժան գործընկերոջ հետ համատեղ լրամշակած «Հայ երաժշտության պատմություն (Հնագույն շրջանից մինչև մեր օրերը)» դասագիրքը եղավ Մարգարիտ Հարությունյանի կյանքի օրոք հրապարակված վերջին աշխատությունը, որը ծնունդ առավ մեր հանրապետության համար շատ ծանր ժամանակահատվածում՝ 1996 թ. (10.):

Գիտական և մանկավարժական գործունեությանը զուգահեռ, երաժշտագետը 1960-ականներից համագործակցում է «Գիտելիք» համամիութենական ընկերության հետ: Հաղիսանալով քաղաքական և գիտական գիտելիքների տարածման համամիութենական ընկերության գործուն անդամներից մեկը՝ նա պարբերաբար հանդես է գալիս հանրության առջև դասախոսություններով, վարում պարապմունքներ, ինչպես նաև հրատարակում մի քանի գիտահանրամատչելի գրքույկներ և հոդվածներ: Լինելով XX դարի հայ երաժշտագիտության մեջ բարձր չափանիշներ սահմանող և հեղինակավոր խոսք ունեցող անհատներից՝ Մ. Գ. Հարությունյանը նաև գործով՝ տարբեր հանրապետությունների երաժիշտների և ԽՍՀՄ կոմպոզիտորների միության հետ ակտիվ համագործակցության շնորհիվ, հսկայական ներդրում ունեցավ հայ կոմպոզիտորական արվեստի և երաժշտագիտական մտքի հանրահռչակման, նոր կապերի ու առնչությունների ձևավորման խնդրում: Երաժշտագետի բնութագիրը լիարժեք պատկերացնելու համար անհրաժեշտ է նշել գործունեության ևս մեկ ոլորտ: Մ. Գ. Հարությունյանը՝ որպես թղթակից, սերտ համագործակցում է ոչ միայն հանրապետական ամսագրերի և թերթերի, այլև համամիութենական "Советская музыка" և "Музыкальная жизнь" ամսագրերի խմբագրությունների հետ: Հայ կոմպոզիտորական դպրոցը միշտ եղել է հետևողական և բծախնդիր երաժշտագետի ուշադրության կենտրոնում: Նշված ամսագրերում նա պարբերաբար հանդես է եկել գրախոսություններով, տեղեկություններ փոխանցել հայ կոմպոզիտորների ձեռքբերումներից, ստեղծագործությունների առաջնաբեմերից, երաժշտագետների նոր ուսումնասիրություններից, հրատարակվող գրքերից, հոդվածներից և նպաստում հայ մշակութային բուռն կյանքի մասին կարծիքի ձևավորմանը: Նա հեղինակում է Հայկական և Ուկրաինական հանրագիտարաններում մի շարք հոդվածներ: Երաժշտագետի արխիվում պահվող մի քանի տասնյակ նամակները վկայում են, թե ինչքան հաճախ այլազգի երաժշտագետները, հրապուրված հայ երաժշտությամբ, իրենց հետաքրքրող հարցերով, ուսումնասիրությունների լիարժեքության համար, դիմում են Մ. Գ. Հարությունյանի օգնությանը, ստանում և վստահաբար հիմնվում տեղեկությունների վրա՝ գիտակցելով դրանց ստույգության աստիճանը:

Նա հայ երաժշտագիտության մեջ առաջիններից էր, որն անդրադարձավ գեղագիտական սկզբունքների դրսևորմանը՝ «Արամ Խաչատրյանի գեղագիտական սկզբունքները» հոդվածում (16.): Տարեցտարի խորանալով այս խնդրում, հեղինակը կոմպոզիտորական արվեստում

գեղագիտական հարցերից անցնում է «արվեստի հոգեբանություն» և «ստեղծագործության հոգեբանություն» հասկացությունների դիտարկմանը: Միայն տարիներ անց պետք է պարզեինք, որ գեղագիտական խնդիրների շուրջ նրա դատողությունները և ուսումնասիրությունները հանգել են հայ երաժշտության զարգացման պատմաշրջանները, տարբեր ժամանակահատվածներում տեղի ունեցող փոփոխությունները (կերպարային աշխարհի, ազգային ըմբռնման, ոճի, արտահայտչամիջոցների), գեղարվեստական հոգեբանության դիտակետից վերլուծելու անհրաժեշտությունը՝ «Գեղարվեստական հոգեբանության պրոբլեմը ազգային երաժշտության պատմաշրջանների դիրքից (XIX-XX դդ.)» անտիպ հոդվածում (14.):

1976-ից մինչև 1995 թվականը լույս տեսած մի շարք գրքերի, հոդվածների, մեթոդամատենագիտական նյութերի և ժողովածուների մեջ առանձնանում են Արամ Խաչատրյանի «Նամակների» երկու ժողովածուները: Առաջինը (1928-1978 թթ.) լույս տեսավ երկու լեզվով (հայերեն, ռուսերեն), 1983 թ.՝ Գոհար Հարությունյանի և Զարուհի Տեր-Ղազարյանի համահեղինակությամբ, երկրորդը (1934-1978 թթ.) ստեղծվեց 1994 թ., դաժան պայմաններում՝ բառի բուն իմաստով, մոմի լույսի տակ (համահեղինակ՝Զ. Տեր-Ղազարյան):

Արամ Խաչատրյանի անձը, ստեղծագործական գործունեությունը և անմահ գործերը, որոնք միշտ եղել ու այսօր էլ մնում են երաժշտագետների, երաժշտասերների ուշադրության կենտրոնում, առաջատար տեղ է գրավում Մարգարիտ Հարությունանի ուսումնասիրություններում: Մեծ երաժշտի մասին մեր պատկերացումները թերի կլինեին, առանց երաժշտագետ, պրոֆեսորի աշխատությունների՝ հոդվածների, գրքերի, հրապարակված նամակների, որոնց վերջերս ավելացավ ևս մեկը՝ երաժշտագետի անձնական արխիվում պահվող «Գրառումներ» ("Записки") վերտառությամբ տետրը և ծավալուն, գրավիչ, անտիպ հոդվածը: Նրանցում հեղինակը նպատակ է հետապնդել ամբողջացնել կոմպոզիտորի կյանքից օր առ օր խնամքով հավաքված, մեկտեղված և խմբավորած «անհայտ» պատառիկները: Հեղինակը բազմակողմանիորեն, տարբեր տեսանկյուններից է ներկայացնում կոմպոզիտորին՝ նրա մտքերը, մոտեցումները, իր ստեղծագործությունների կատարման նկատմամբ սեփական վերաբերմունքը և ստեղծագործական մտահղացումները, կատարողական չափանիշները և արվեստագետին հատուկ ազնվությունը: «Գրառումները» ընդգրկում են 1937-ից մինչև 1978 թ.՝ Ա. Ի. Խաչատրյանի մահվանն ընկած ժամանակաշրջանը: Իր հիշողությունները երաժշտագետն սկսել է թղթին հանձնել 50-ականներին: Այն ներառում է մտքեր երաժշտության, մանկավարժության, իր բալետների և սիմֆոնիաների, Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբերի, երաժշտակատարողական էթիկետի խնդիրների ու հարցերի մասին: Մարգարիտ Հարությունյանի դերը Խաչատրյանի գործունեության լուսաբանման խնդրում շատ ավելին է, քան հիշողություններ գրելը, ստեղծագործություններ մեկնաբանելը: Նա ժամանակին ոչ միայն մեծ ներդրում ունեցավ Տուն-թանգարանի հիմնադրման գործում, այլև կարողացավ պայմաններ ստեղծել խաչատրյանական մասունքները Երևան տեղափոխելու և հարուստ ցուցադրություն պատրաստելու համար (25.):

Հարությունյանը մանկավարժական գործունեությամբ նույնպես զգալի ներդրում ունեցավ երաժշտագետների նոր սերնդի ձևավորման և կայացման գործում: Նա ունեցել է մեծ մասնագիտական դասարան, որի ներկայացուցիչներից են եղել Ն. Թահմիզյանը, Ա. Փահլևանյանը, Ն. Աթանասյանը և շատ-շատերը:

Երաժշտագետի անձնական արխիվում պահվող ավարտուն, բայց դեռ չխմբագրված անտիպ «Գեղարվեստական հոգեբանության պրոբլեմն ազգային երաժշտության տարբեր պատմաշրջանների դիրքերից (XIX-XX դդ.)» հոդվածը թվագրված է «1995 թ., օգոստոսի 5»: Նրանում կարդում ենք.- «Երրորդ հազարամյակի շեմին փորձությունների ոլորտում ապրող, բայց իր կենսահորդ ուժերը լարող, իր մտավոր և հուզական պոտենցյալը գործնականին նվիրաբերող ժողովուրդը պետք է որ գտնի իր մշակույթի զարգացման նոր հնարավորությունները:

Ճգնաժամային տասնամյակն անկասկած առաջ բերելով հոգեկան մեծ տեղաշարժեր, որոնք արտացոլվել են և գեղարվեստական հոգեբանության ոլորտում, կծառայեն որպես ուսումնասիրությունների նյութ»: Սա երաժշտագետի վերջին աշխատությունն է, որով ավարտվեց նրա գիտական գործունեությունը, իսկ մոտ տարի և կես հետո՝ 1997 թ. դեկտեմբերի 7-ին, նաև երկրային կյանքը:

Բայց արվեստին ու բարձրին ծառայելու, լավագույնն ստեղծելու Հարությունյանների ընտանիքին հատուկ շնորհը շարունակվում է Մարգարիտ Հարությունյանի թոռնուհու՝ դաշնակահարուհի Եվա Հարությունյանի ստեղծագործական կենսագրությամբ: Ժնևի ու Բեռնի կոնսերվատորիաների ասպիրանտուրաներում ուսանած բազմաշնորհ դաշնակահարուհին այսօր Եվրոպական կոնսերվատորիաների պատմության մեջ ամենաերիտասարդ տնօրենն է, ով արդեն 13 տարի ղեկավարում է Ժնևի Ֆերենց Լիստի հիմնած երաժշտական կրթօջախը և հավատարիմ ծնողների պատգամին, բոլոր հնարավոր միջոցներով աջակցում է արվեստում ու կյանքում ամեն նորին ու տաղանդավորին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. *Բարսամյան Ա. Ա., Հարությունյան Մ. Գ., Սովետահայ երաժշտությունը, ՀՍՍՀ «Գիտելիք» ընկերություն, Եր., 1981 թ.: Barsamyan A. A., Harutyunyan M. G., Sovetahay yerazhshtuthyn', HSSH "Giteliq" 'nkeruthyun, Yer., 1981 th.*
2. *Գասպարյան Ս., Կոմիտաս, (Ծննդյան 100-ամյակի առթիվ) Խմբագիր՝ Մ. Գ. Հարությունյան; «Գիտելիք» ընկերություն ՀՍՍՀ, Եր., ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության N 6 տպարան, 1969 թ.: Gaspatyan S., Komitas, (Tsnnadyan 100-amyaki arthiv), Khmbagir: M. G. Harutyunyan, "Giteliq" 'nkeruthyun, HSSH, Yer., HSSH Ministrneri soveti mamuli petakan komitei poligrafaardyunaberuthyan glkhavor varchuthyan N 6 tparan, 1969 th.*
3. *Իսահակյան Վ. Ա., Հայրս, Եր., 2000 թ., - 590 էջ: Isahakyan V. A., Hayrs, Yer., 2000 th.*
4. *Կոմիտաս, (Մեթոդամատենագիտական նյութերի ժողովածու) /կազմողներ՝Զ. Հ. Ղազարյան, Մ. Գ. Հարությունյան, Եր., 1984 թ.: Komitas, (Methodamatenagitakan nyutheri zhoghovatsu) /kazmoghner: Z. H. Ter-Ghazaryan, M. G. Harutyunyan, Yer., 1984 th.*

n, Notayin-yerazhshtakan grakanuthyanbazhin, Yer., 1974 th.

7. *Հարությունյան Մ. Գ., Տեր-Ղազարյան Զ. Հ., Խաչատրյան Արամ Եղիայի. Նամակներ (1934-1978 թթ.), Եր., Ապոլոն, 1995 թ.: Harutyunyan M. G., Ter-Ghazaryan Z. H., Khachatryan Aram Yeghiayi. Namakner (1934-1978 thth.) Yer., Apalon, 1995 th.*

5. Հայ ականավոր երգիչներ, (Մատենագիտական ցանկ) խմբագրակազմ. /Ն. Թեյմուրազյան, Զ. Սեմյոնովա, Մ. Հարությունյան, Մ. Բաբայան, ՀՍՍՀ Ա. Մյասնիկյանի անվ. հանրապետական գրադարան, Նոտային-երաժշտական գրականության բաժին, Եր., 1974 թ.: Hay akanavor ergichner, (Matenagitakan zank) khmbagrakazm. /N. Theymurazyan, Z. Semyonova, M. Haruthyunyan, M. Babayan, HSSH A. Myasnikyani anv. hanrapetakan gradaran, Notayin-yerazhshtakan grakanuthyanbazhin, Yer., 1974 th.

6. Հարությունյան Մ. Գ., Հարությունյան Գ. Ա., Տեր-Ղազարյան Զ. Հ., Ա. Խաչատրյան. Նամակներ (1928-1978 թթ.), Եր., Սովետական գրող, 1983 թ.: Harutyunyan M. G., Harutyunyan G. A., Ter-Ghazaryan Z. H., A. Khachatryan, Namakner (1928-1978 thth.), Yer., Sovetakan grogh, 1983 th.

7. Հարությունյան Մ. Գ., Տեր-Ղազարյան Զ. Հ., Խաչատրյան Արամ Եղիայի. Նամակներ (1934-1978 թթ.), Եր., Ապոլոն, 1995 թ.: Harutyunyan M. G., Ter-Ghazaryan Z. H., Khachatryan Aram Yeghiayi. Namakner (1934-1978 thth.) Yer., Apalon, 1995 th.

8. Հարությունյան Մ. Գ., Տեր-Ղազարյան Զ. Հ., Ճանապարհ դեպ Պառնաս, Gradus ad Parnassum, Եր., Հայաստան, 1991 թ.: Harutyunyan M. G., Ter-Ghazaryan Z. H., Dchanaparh dep Parnas, Gradus ad Parnassum, Yer., Hayastan, 1991 th.

9. Հարությունյան Մ. Գ., Ավագյան Է. Ս., Արամ Խաչատրյան, Եր., Սովետական գրող, 1981 թ.: Harutyunyan M. G., Avagyan Ej. S., Aram Khachatryan. Yer., Sovetakan grogh, 1981 th.

10. Հարությունյան Մ. Գ., Բարսամյան Ա. Ա., Հայ երաժշտության պատմություն. (Հնագույն շրջանից մինչև մեր օրերը), Եր., Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Եր., Նոր դպրոց, 1996 թ., (առաջին հրատարակումը՝ Եր., 1968 թ.): Harutyunyan M. G., Barsamyan A. A., Hay yerazhshtuthyan patmuthyun. (Hnaguyn shrjanitz minchev mer orer'), Yer., Komitasi anvan petakan konservatoria., Yer., Hor dprotz, 1996 th., (arajin hratarakum'Yer., 1968 th.)

11. Հարությունյան Մ. Գ., Արամ Խաչատրյան. կոմպոզիտորի մասին, Եր., 1962 թ.: Harutyunyan M. G., Aram Khachatryan. kompozitori masin, Yer., 1962 th.

12. Հարությունյան Մ. Գ., Արամ Խաչատրյան, Եր., Սովետական գրող, 1981 թ.: Harutyunyan M. G., Aram Khachatryan. Sovetakan grogh, 1981 th.

13. Մարկոսյան Կ. Հ., Հարությունյան Մ. Գ., Գոհար Գալաչյան. Կյանքն ու գործունեությունը, Հայկական թատերական ընկերություն, Եր., 1985 թ.: Markosyan K.H., Haruthyunyan M. G., Gohar Galachyan. Kyanqn u gortsuneuthyun', Haykakan thaterakan 'nkeruthun, Yer., 1985 th.

14. Նամակներ, հոդվածներ և փաստաթղթեր Մարգարիտ Հարությունյանի անձնական արխիվից: Namakner, Hodvatsner ev pastathghther Margarit Harutyunyani andzhnakan arkhivitz.

15. Պետրոսյան Մ., Երեքը հայ դիրիժորներից, /խմբագիր՝ Հարությունյան Մ. Գ., Եր., ՀԹԸ, 1976 թ., - 200 էջ: Petrosyan M., Yereq' hay dirizhorneritz, /khmbagir: Haruthyunyan M. G., Yer.,, HTh', 1976 th., - 200 ejj.

16. Հարությունյան Մ. Գ., Արամ Խաչատրյանի գեղագիտական սկզբունքները, //Սովետական արվեստ, ամսագիր, #9, 1970 թ., էջ 52: Harutyunyan M. G., Aram Khachatryani gehgagitakan skzbunqner', //Sovetakan arvest, #9, 1970 th., ejj 52.

17. Տիգրան Չուխաճյանի մատենագիտությունը, /կազմողներ՝ Մ. Հարությունյան, Ն. Թեյմուրազյան և Զ. Սեմյոնովա, ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրություն, Եր., 1964 թ.: Tigran Chukhajyani matenagituthyun', /kazmoghner: M. Haruthyunyan, N. Theymurazyan ev Z. Semyonova, HSSR Kulsurayi Ministruthun, Yer., 1964 th.

18. Արտյոնյան Մ. Գ., Այկանուշ Դանիելյան, Եր., 1988. Arutyunyan M. G., Ajkanush Danielyan, Yer., 1988.

19. Արտյոնյան Մ. Գ., Արմյանսկայա ССР, Եր.: Մզգիզ, 1957, - 118 с. Arutyunyan M. G., Armyanskaya SSR, Yer.: Muzgiz, 1957, - 118 s.

20. Григорян Л. А., Виолончельное искусство Армении. Исто-ри-ческий очерк, /редактор - Арутюнян М. Г., М., 1992. Grigoryan L. A., Violonchel'noe iskusstvo Armenii. Istori-cheskij ocherk, /redaktor - Arutyunyan M. G., M., 1992.

21. /Музыка Советской Армении, ред.колл. Р. А. Атаян, М. Г. Арутюнян, Г. Е. Будагян, М., 1960, - 355 с. /Muzyka Sovetskoj Armenii, redaktzionnaya kollegiya R. A. Atayan, M. G. Arutyunyan, G.E. Budagyan, M., 1960, - 355 s.

22. Семенова З. Л, Корганов, Василий Давыдович. Статьи, вос-поминания, путевые заметки, биобиблиография; ре-дак-тор Арутюнян М. Г., Министерство культуры Арм.ССР; Государственная республиканская библиотека им. А. Ф. Мяс-никяна, Ер., 1968. Semenova Z. L., Korganov, Vasilij Davydovich. Stat'i, vospominaniya, putevye zametki, biobibli-o--grafiya; redaktor Arutyunyan M. G., Ministerstvo kul'tury Arm.SSR; Gosudarstvennaya respublikanskaya biblioteka im. A. F. Myasnikyana, Yer., 1968.

23. Тигранов Г. Г., Жизнь отданная искусству., редактор М. Г. Арутюнян, Ер., 1978, - 68 с. Tigranov G. G., Zhizn' otdannaya iskusstvu., redaktor M. G. Arutyunyan, Yer., 1978, - 68 s.

24. //Առավոտ օրաթերթ, 05.05.2021, էջ 7 https://www.aravot.am /2021/05/05/1188642/ //Aravot 0ratherth, 05.05.2021, ejj 7.

25. //Առավոտ օրաթերթ, 18.10.2021, էջ 7, https://www.aravot.am/2021/10/18/1222969/?fbclid=IwAR1ulDfn9jf1BOxFoLJtte4FIn6rsR7EFFJSHUJF05HXpjs7W13ZtCokJIA //Aravot 0ratherth, 05.05.2021, ejj 7.

Բանալի-բառեր. Մարգարիտ Հարությունյան, Արամ Խաչատրյան, ԵՊԿ, երաժշտագիտություն, Հայ երաժշտության պատմություն:
Ключевые слова: Маргарита Арутюнян, Арам Хачатурян, ЕГК, музыкознание, история армянской музыки.
Keywords: Margarita Harutyunyan, Aram Khachaturyan, YSC, Musicology, History of Armenian Music.

Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին

Տեղեկություններ հեղինակի մասին. *ԵՂՈՅԱՆ ՆՎԱՐԴ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ, երաժշտագետ: [(ծ. 1969թ. ք. Լենինականում (այժմ Գյումրի)]: Ավարտել է՝ ԵՊԿ երաժշտագիտական բաժինը 1994-ին (պրոֆ, արվեստագիտության թեկնածու Մ.Գ. Հարությունյանի դասարանը): Դասավանդում է՝ 1998 թվից Երևանի պետ. կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղում: 2015 թ. աշխատում է «Օյունջյան» ԲՀ «Վարդուհի» արվեստի դպրոցում՝որպես ուսումնական գործընթացի կազմակերպիչ: Հրատարակվել է գիտական ժողովածուներում, հանդեսներում, մամուլում, կարդացել է զեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Հեղինակ է շուրջ 20 գիտական հոդվածների:*

Сведения об авторе: *ЕГОЯН НВАРД АЛЕКСАНДРОВНА, музыковед. Родилась в 1969 в Ленинакане (ныне Гюмри). Окончила отделение музыковедения Ереванской государственной консерватории им. Комитаса, класс проф., канд. искусствоведения М. Г. Арутюнян (1994) . Преподает в Гюмрийском филиале ЕГК (с 1998). С 2015 года работает организатором учебного процесса в Школе искусств "Вардуи" при Благотворительном фонде "Оюнджян". Автор публикаций в научных сборниках и журналах. Выступала с докладами на республиканских и международных научных конференциях. Автор около двадцати статей.*

Information about the author: *NVARD ALEXANDER EGHOYAN, musicologist. Born in 1969 in Leninakan (now Gyumri). In 1994, she graduated from the Department of Musicology at Yerevan State Conservatory (class of M. G. Harutyunyan, professor, PhD in Art History). Since 1998, she has been teaching at the Department of Music Theory at Gyumri branch of Yerevan State Komitas Conservatory. Since 2015, she has been working as an educational coordinator at the Varduhi Art School under the Oyunjyan Charitable Foundation. She has publications in scientific books, magazines, and in the press. She has presented reports at republican and international conferences. She is the author of nearly twenty articles.*

Резюме

Музыковед, преподаватель Гюмрийского филиала ЕГК им. Комитаса *Нвард Александровна Егоян. - "Выдающиеся деятели ЕГК: Маргарита Арутюнян (к 100летнему юбилею)".*

8 января 2021 г. исполнилось 100 лет со дня рождения музыковеда, педагога, заслуженного деятеля искусств Ар - мянской ССР, кандидата искусствоведения, профессора Маргариты Арутюнян. Заслуга ее научной, просветительской и общественной деятельности велика в контексте всей истории армянской музыковедческой школы. Круг научных интересов широк: от истоков истории армянской музыки до становления и развития армянской профессиональной композиторской школы до конца XX века.

Личность и бессмертные произведения Арама Хачатуряна занимают ведущее место в ряде книг и статьей музыковеда: издание двух сборников "Арам Хачатурян, Письма" и создание (в соавторстве) экспозиции Дома-музея композитора являются большим вкладом в хачатуряноведение. В качестве редактора она сотрудничала с З. Семеновой, С. Гаспаряном, Г. Тиграновым, М. Петросяном, Л. Гри д о- ряном и другими. Маргарита Арутюнян как корреспондент сотрудничала не только с редакциями республиканских журналов, газет, но и со всесоюзными журналами "Советская музыка" и "Музыкальная жизнь". Своей педагогической деятельностью Арутюнян внесла значительный вклад в формирование и становление нового поколения музыковедов. Свойственный семье Арутюнянов дар служить искусству продолжается в творческой биографии внучки Маргариты Арутюнян, пианистки Евы Арутюнян.

Summary

Musicologist, pedagogue at the Gyumri Branch of Yerevan State Komitas Conservatory *Nvard Alexsandr Yeghoyan. - "Eminent Persons in Yerevan Conservatory. Margarita Harutyunyan. On the 100th Anniversary".*

On January 8, 2021, we celebrated the 100th anniversary of Margarita Harutyunyan, musicologist, pedagogue, Honored Art Worker of the Armenian SSR, PhD in Art History, Professor. The contribution of her scientific, educational and social activities is profound within the context of the history of Armenian music and musicology. The range of her academic interests extended from the origins of Armenian music to the development of Armenian academic music tradition at the beginning of the 20th century.

Aram Khachaturian's personality and his immortal works remain central to Margarita Harutyunyan's publications and writings as a musicologist. She has published two volumes of Aram Khachaturian's Letters, and was one of the founders of the composer's House Museum, thus greatly contributing to Khachaturian studies. As an editor, she has been actively collaborating with Z. Semyonova, S. Gasparyan, G. Tigranov, M. Petrosyan, L. Grigoryan and others. As a correspondent, Margarita Harutyunyan has been cooperating not only with local music magazines, but also with the international publushers, particularly with "Sovetskaya Musika" and "Musikalnaya Zhizn".

Through her teaching, Margarita Harutyunyan has also made a significant contribution to the formation and training of a new generation of musicians. The talent for the arts within the family continues in the artistic career of Margarita Harutyunyan's grand-daughter, pianist Eva Harutyunyan.